ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ [illegible]
«22» 02 2021թ.

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ տնօրենին
(ՀՎՀՀ 03804898)
հասցե՝ Արարատի մարզ ք. Մասիս 1փող.
էլ. հասցե՝ vaghinak.yeghiazaryan@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 23.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրին կից 31.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 20000 հատ Սավան՝ բամբակյա, որից 16585 հատ Սավան՝ բամբակյա, չի մատակարարել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ԼԳ-2021/30 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 պայմանագիրը վերը նշված ապրանքների մասով՝ հիմք ընդունելով N ԳՀԱՊՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Եթե 22.01.2021թ. ՆՏԱ/192 ծանուցմամբ սահմանված ժամկետում և կարգով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն չի կատարել տույժերի և պայմանագրի կատարման ապահովման տուժանքի հետ կապված պարտավորությունները, ապա տեղեկացնում եմ, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 722691 ՀՀ դրամ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 3228750 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Ն. ՅՈԼՉՅԱՆ